ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
**Պ Ա Տ Գ Ա Մ Ա Վ Ո Ր**

---

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Սիմոնյան,**

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 109-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածներով, օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ եմ ներկայացնում «Բուսասանիտարիայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ սույն գրությանը կցվում են՝

1. օրենքի նախագիծը.

2. օրենքի նախագծի ընդունման հիմնավորումը.

3. տեղեկանք, որտեղ տեսանելի ձևով ներկայացվում է Օրենքի համապատասխան հոդվածներում առաջարկվող լրացումները և փոփոխությունները:

Խնդրում եմ օրենքի ներկայացված նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** **ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

**30.04.2026թ.**

*ՆԱԽԱԳԻԾ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Բուսասանիտարիայի մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ- 140-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1-ին կետով.

«3.1) Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդների կամ դրանց ազդող նյութերի, համագործիչ կամ օժանդակ նյութերի և ագրոքիմիկատների կամ դրանց բաղադրիչ նյութերի արգելման ու շրջանառությունից հանելու կարգի սահմանումը.»:

***Հոդված 2.*** Օրենքի 6-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1) պեստիցիդը կամ դրա ազդող նյութը, համագործիչ կամ օժանդակ նյութերից որևէ մեկը արգելված են Հայաստանի Հանրապետությունում.»:

***Հոդված 3.*** Օրենքի 6.1.-ին հոդվածի՝

1) 6-րդ մասի 1-ին կետում «շեղումները,» բառից և կետադրական նշանից հետո լրացնել «բաղադրիչ նյութերը,» բառերով և կետադրական նշանով.

2)6-րդ մասի 3-րդ կետում «քանակը,» բառից հետո լրացնել «(տվյալների առկայության դեպքում)» բառերով և կետադրական նշաններով.

3) 9-րդ մասի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1) ագրոքիմիկատի սննդատարրերից որևէ մեկը արգելված է Հայաստանի Հանրապետությունում».

***Հոդված 4.*** Օրենքի 6.2.-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«3) պեստիցիդը կամ դրա ազդող նյութը, համագործիչ կամ օժանդակ նյութերից որևէ մեկը, ինչպես նաև ագրոքիմիկատը կամ դրա բաղադրիչ նյութերից որևէ մեկը արգելված են Հայաստանի Հանրապետությունում.»

*Հոդված 5.* **Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2.Սույն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված՝ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3.1-ին կետից բխող ենթաօրենսդրական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Սույն օրենքի նախագծի նպատակն է լրացնել ՀՀ «Բուսասանիտարիայի մասին» օրենքում առկա իրավական բացը՝ ամրագրելով կառավարության լիազորությունը՝ արգելելու առանձին պեստիցիդների կամ ագրոքիմիկատների շրջանառությունը և կիրառումը Հայաստանի Հանրապետությունում:

Գործող իրավակարգավորումները չեն նախատեսում նման ուղիղ լիազորություն, ինչի արդյունքում պետությունը զրկված է օպերատիվ արձագանքման հնարավորությունից այն դեպքերում, երբ առկա են գիտականորեն հիմնավորված տվյալներ պեստիցիդների վտանգավորության վերաբերյալ:

Առաջարկվող փոփոխությունը կրում է թիրախային և տեխնիկական բնույթ և չի ենթադրում գործող համակարգի ամբողջական վերափոխում, այլ լրացնում է «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ՀՀ Կառավարության լիազորությունները: Նախագծով առաջարկվում է ավելացնել ևս մեկ, արգելման լիազորություն:

**Գործող իրավիճակը և խնդիրները**

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդների շրջանառության արգելումը պայմանավորված է միջազգային պարտավորություններով, մասնավորապես՝ Ռոտերդամի կոնվենցիայի շրջանակներում սահմանված կարգավորումներով:

Սակայն նշված մոտեցումը ունի մի շարք էական ռիսկեր: Անհրաժեշտ է, որպեսզի Հայաստանի Հանրաապետությունը ունենա արագ արձագանքման ինքնուրույն գործիք, չսպասելով որ ինչ-որ խնդրահարույց պեստիցիդի գիտականորեն հիմնավորված արգելքի անհրաժեշտությունը միջազգային կոնսենսուսով արձանագրվի Ռոտերդամի կոնվենցիայում:

Հարկ եմ համարում ընդգծել, որ Ռոտերդամի կոնվենցիային միացած գրեթե բոլոր երկրները ունեն այդ գործիքակազմը:

Մի շարք պեստիցիդներ, որոնք արդեն արգելված կամ խիստ սահմանափակված են զարգացած երկրներում, շարունակում են կիրառվել Հայաստանում:Այսպես՝ քլորպիրիֆոսը Հայաստանի Հանրապետությունում լայնորեն կիրառվող ինսեկտիցիդ է, որը արգելված է բազմաթիվ երկրներում: Գիտականորեն ապացուցված է, որ տվյալ նյութը հանգեցնում է նյարդաբանական զարգացման խանգարումների, հատկապես երեխաների մոտ: Արգելված է Եվրոպայի բոլոր երկրներում, Արգենտինայում, Կանադայում, Վիետնամում և շատ այլ երկրներում: Հայաստանի Հանրապետություն է ներկրվում հիմնականում Չինաստանից: Չինաստանն անգամ իր երկրի տարածքում սահմանափակել է տվյալ պեստիցիդի կիրառումը, թույլատրելով օգտագործել միայն բամբակի մշակության մեջ: Որևէ այլ պարագայում, երբ մշակաբույսը կապ ունի սննդի հետ, քլորպիրիֆոսի օգտագործումը Չինաստանում արգելված է: Մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում քլորպիրիֆոսը ամենաշատը օգտագործվող ինսեկտիցիդների ցանկում է:

Հայաստանի Հանրապետությունում լայնորեն կիրառվում են նաև տասնյակից ավել այլ պեստիցիդներ, որոնք արգելված են Եվրոպական Միության տարածքում:

**Առողջապահական և էկոլոգիական ռիսկեր**

Պեստիցիդների կիրառման հետ կապված ռիսկերը ներառում են.

- մարդու առողջության վրա ազդեցություն (նեյրոտոքսիկություն, էնդոկրին խանգարումներ),
- հողի և ջրային ռեսուրսների աղտոտում,
- կենսաբազմազանության նվազում:

Միջազգային կառույցները, ինչպիսիք են World Health Organization և European Food Safety Authority, պարբերաբար հրապարակում են տվյալներ նման ռիսկերի վերաբերյալ, սակայն գործող օրենքը չի ապահովում դրանց վրա հիմնված ազգային որոշումների ընդունման հնարավորություն:

Գործող համակարգը կենտրոնացած է գրանցման գործընթացի վրա և չունի բավարար ճկունություն՝ արդեն գրանցված նյութերի նկատմամբ օպերատիվ սահմանափակումներ կիրառելու համար:

**Միջազգային փորձ**

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ զարգացած երկրներում կիրառվում են բազմաշերտ կարգավորման մեխանիզմներ, որոնք ներառում են նաև արագ արգելման կամ սահմանափակման գործիքներ:

Եվրոպական Միությունում պեստիցիդների շրջանառության կարգավորումը իրականացվում է կենտրոնացված և գիտական հիմքերի վրա:

ԵՄ անդամ պետությունները և եվրոպական կառույցները ունեն հնարավորություն՝

- արգելելու ակտիվ նյութերը՝ նոր գիտական տվյալների հիման վրա,
- կիրառելու ժամանակավոր սահմանափակումներ,
- վերանայելու արդեն տրված թույլտվությունները:

Գրեթե բոլոր երկրներում կառավարությունները կամ լիազոր մարմինները ունեն իրավասություն՝

- արագ արձագանքելու առողջապահական կամ էկոլոգիական ռիսկերին,
- ընդունելու անհետաձգելի որոշումներ՝ առանց երկարատև օրենսդրական գործընթացների:

Միջազգային լավագույն պրակտիկան հիմնված է.

- ռիսկերի գնահատման վրա,
- անկախ գիտական տվյալների կիրառման վրա,
- նախազգուշական սկզբունքի վրա (precautionary principle):

Այս մոտեցումը թույլ է տալիս կանխարգելել հնարավոր վնասները՝ նույնիսկ այն դեպքում, երբ ռիսկերը ամբողջությամբ ապացուցված չեն, սակայն առկա են բավարար գիտական կասկածներ:

Գործող օրենքում բացակայում է կառավարության ուղղակի լիազորությունը՝ առանձին պեստիցիդների արգելման կամ սահմանափակման վերաբերյալ որոշումներ ընդունելու համար, որը լրացվում է առաջարկվող նախագծով:

Նոր լիազորությունը թույլ կտա.

- բարձրացնել պետական կառավարման ճկունությունը,
- ապահովել արագ արձագանք ռիսկերին,
- համահունչ դարձնել Հայաստանի քաղաքականությունը միջազգային միտումներին:

Առաջարկվող փոփոխությունը կնպաստի.

- բնակչության առողջության պաշտպանության մակարդակի բարձրացմանը,
- հատկապես խոցելի խմբերի (երեխաներ, գյուղատնտեսական աշխատողներ) պաշտպանությանը:

Նախագծի ընդունման արդյունքում կրճատվեն.

- հողի և ջրերի աղտոտման ռիսկերը,
- կենսաբազմազանության վրա բացասական ազդեցությունները:

**Ակնկալվող արդյունքը**

Օրենքի նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է, որ կառավարությունն իր նոր լիազորության շրջանակներում, օպերատիվ կերպով կմշակի պեստիցիդների արգելման կարգը, ստանալով իրավական հնարավորություն՝ արագ և արդյունավետ արձագանքելու պեստիցիդների հետ կապված ռիսկերին:
Նախագծով նաև առաջարկվում է լրացնել ագրոքիմիկատների պետական գրանցման համար սահմանված պայմաններից մեկը, որը խնդրահարույց է և դժվարություններ է ստեղծում տնտեսվարողների համար:

«Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգավորմամբ ագրոքիմիկատների պետական գրանցման համար պահանջվում է ներկայացնել աշխատանքային գոտում օդում ագրոքիմիկատի թույլատրելի սահմանային կոնցենտրացիայի վերաբերյալ տվյալներ, սակայն նման ցուցանիշները ագրոքիմիկատների գերակշիռ մեծամասնության համար կամ չեն սահմանվում, կամ չեն կիրառվում՝ հաշվի առնելով դրանց ֆիզիկաքիմիական հատկությունները: Նման ցուցանիշները բնորոշ են հիմնականում թունավոր և արագ գոլորշիացող քիմիական նյութերին, այդ թվում պեստիցիդների զգալի մասին, մինչդեռ ագրոքիմիկատները չեն առաջացնում օդային ազդեցության էական ռիսկերՄիջազգային պրակտիկայում, այդ թվում՝ եվրոպական երկրներում, ագրոքիմիկատների մասով նման տվյալների ներկայացումը պարտադիր պահանջ չէ:Միաժամանակ, որոշ դեպքերում արտադրողների մոտ կարող են առկա լինել համապատասխան հետազոտություններ կամ մեթոդաբանություններ, որոնք կարող են օգտակար լինել անվտանգության գնահատման տեսանկյունից:

Առաջարկվող փոփոխությամբ նախատեսվում է պահպանել տվյալ պահանջը՝ այն դարձնելով կիրառելի միայն այն դեպքերում, երբ արտադրողի մոտ առկա են համապատասխան հետազոտություններ կամ մեթոդաբանություն, իսկ դրանց

բացակայության դեպքում նախատեսել հնարավորությունը՝ համապատասխան տվյալների բացակայությունը նշելու պետական գրանցման համար ներկայացվող փաստաթղթերում:

Նշված մոտեցումը թույլ կտա պահպանել անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումը՝ միաժամանակ վերացնելով անհարկի վարչարարական բեռը և համապատասխանեցնելով կարգավորումը միջազգային լավագույն պրակտիկային:

ՏԵՂԵԿԱՆՔ

ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Հոդված 5. Բուսասանիտարիայի ոլորտում Կառավարության լիազորությունները**
***(վերնագիրը փոփ. 23.03.18 ՀՕ-287-Ն)***

1. Բուսասանիտարիայի ոլորտում Կառավարության լիազորություններն են՝

1) ոլորտում իրականացվող նպատակային ծրագրերի հաստատումը.

2) բուսասանիտարիայի միջազգային համագործակցության պետական ծրագրերի հաստատումը.

3) պեստիցիդների և ագրոքիմիկատների պետական գրանցման, վերագրանցման և գրանցումից հանելու կարգի սահմանումը.

3.1) Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդների կամ դրանց ազդող նյութերի, համագործիչ կամ օժանդակ նյութերի և ագրոքիմիկատների կամ դրանց բաղադրիչ նյութերի արգելման ու շրջանառությունից հանելու կարգի սահմանումը.

4) ***(կետն ուժը կորցրել է 15.11.24 ՀՕ-460-Ն)***

5) պեստիցիդների և ագրոքիմիկատների փորձաքննության անցկացման կարգի և պեստիցիդների և ագրոքիմիկատների ներմուծման կամ արտահանման եզրակացության ձևերի սահմանումը.

6) բույսերի կարանտինի սահմանումը և կարանտինի չեղյալ հայտարարումը.

7) պեստիցիդների և ագրոքիմիկատների արտադրությանը և շրջանառությանը ներկայացվող պահանջների սահմանումը.

8) պեստիցիդի և ագրոքիմիկատի փաթեթավորմանը ներկայացվող պահանջների սահմանումը.

8.1) բուսասանիտարական փորձաքննության նպատակով փորձանմուշ վերցնելու կարգի սահմանումը.

8.2) բուսաբուծության ոլորտում աշխատանքի անվտանգության կանոնների հաստատումը.

9) սույն օրենքից բխող իրավական այլ ակտերի ընդունումը:

***(5-րդ հոդվածը փոփ. 17.12.14 ՀՕ-240-Ն, 23.03.18 ՀՕ-287-Ն, լրաց. 07.07.22 ՀՕ-310-Ն, փոփ., լրաց. 15.11.24 ՀՕ-460-Ն)***

***(15.11.24 ՀՕ-460-Ն օրենքն ունի անցումային դրույթ)***

**Հոդված 6. Պեստիցիդների պետական գրանցումը և վերագրանցումը**
***(վերնագիրը խմբ. 15.11.24 ՀՕ-460-Ն)***

1. Հայաստանի Հանրապետությունում արտադրվող, Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և Հայաստանի Հանրապետությունում շրջանառվող պեստիցիդները պարտադիր ենթակա են պետական գրանցման (այսուհետ՝ գրանցում), բացառությամբ սույն օրենքով սահմանված հրատապ դեպքում քաղաքականություն մշակող լիազոր մարմնի կողմից ընդունվող իրավական ակտի հիման վրա ներմուծված պեստիցիդների:

2. Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդները գրանցվում են ընդհանուր և պարզեցված ընթացակարգերով: Կառավարությունը սահմանում է պեստիցիդների պարզեցված ընթացակարգով գրանցման իրականացման դեպքերը:

3. Պեստիցիդների գրանցումն իրականացնում է լիազոր մարմինը:

4. Լիազոր մարմինը պեստիցիդների ընդհանուր ընթացակարգով գրանցումն իրականացնում է հայտը ներկայացնելուց հետո՝ քսան աշխատանքային օրվա ընթացքում, իսկ պարզեցված ընթացակարգով՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում:

5. Հայտում կամ հայտին կից՝ սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված փաստաթղթերում թերությունների (վրիպակների, անճշտությունների, անհամապատասխանությունների, թվաբանական սխալների և նման այլ բացթողումների) առկայության, ինչպես նաև փաստաթղթերը թերի լինելու դեպքերում լիազոր մարմինը դրանք հայտնաբերելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, հայտատուին առաջարկում է 10 աշխատանքային օրվա ընթացքում շտկել թերությունները, իսկ սույն հոդվածի 4-րդ մասում նշված ժամկետները երկարաձգվում են 10 աշխատանքային օրով:

6. Հայաստանի Հանրապետությունում արտադրված պեստիցիդների գրանցումն իրականացվում է ընդհանուր ընթացակարգով: Պեստիցիդների գրանցման համար լիազոր մարմին ներկայացվում են հետևյալ տեղեկությունները պարունակող փաստաթղթերը.

1) պեստիցիդի առևտրային անվանումը, ազդող նյութը, դրա տոկոսային հարաբերությունը կամ պարունակությունը միավոր ծավալում և թույլատրելի շեղումները, համագործիչ և օժանդակ նյութերը, դրանցից յուրաքանչյուրի տոկոսային հարաբերությունը կամ պարունակությունը միավոր ծավալում, պատրաստուկային ձևը, արտադրողի անվանումը, հասցեն (իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական հասցեն և արտադրողի ներկայացրած արտադրական տարածքի գտնվելու երկիրը, ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, հաշվառման հասցեն և արտադրողի ներկայացրած արտադրական տարածքի գտնվելու երկիրը).

2) պեստիցիդի ծախսի նորման, օգտագործման ժամկետը, եղանակը և առանձնահատկությունները, մշակվող օբյեկտը, վնասակար օրգանիզմը, մշակումների քանակը, սպասման ժամկետը, կիրառման սահմանափակումները, կիրառման անվտանգությանը ներկայացվող պահանջները.

3) պեստիցիդի հիգիենիկ նորմատիվները (մարդու օրգանիզմում օրվա թույլատրելի սահմանային չափաբաժինը, հողում թույլատրելի սահմանային քանակը, ջրամբարների ջրում թույլատրելի սահմանային քանակը, աշխատանքային գոտում օդում թույլատրելի սահմանային քանակը, մթնոլորտային օդում թույլատրելի քանակը և թույլատրելի առավելագույն մակարդակը սննդամթերքում).

4) պեստիցիդի քիմիական փորձաքննության, ազդող նյութի մնացորդային քանակների որոշման մեթոդիկաները, պեստիցիդների ազդող նյութի բյուրեղային տիպօրինակը (ստանդարտը), եթե տվյալ նյութի փորձաքննության մեթոդիկաներով բյուրեղային տիպօրինակն անհրաժեշտ է.

5) պեստիցիդի թունունակությունը ոչ նպատակային տեսակների համար (ձկներ, թռչուններ, մեղուներ, հողի միկրոօրգանիզմներ և այլն).

6) պեստիցիդի ազդեցությունը վերարտադրողականության վրա.

7) պեստիցիդի մուտագեն, ալերգիկ, ուռուցքածին և մաշկագրգիռ, տերատոգեն, գոնադատոքսիկ, սաղմնաթունային հատկությունները.

8) պեստիցիդի թունաբանահիգիենիկ գնահատումը հավաստող փաստաթուղթը.

9) սույն օրենքի 9-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ պեստիցիդի պիտակի նկարագիրը.

10) տեղեկանք Հայաստանի Հանրապետությունում դրանց երկու տարվա անընդմեջ դաշտային և լաբորատոր փորձարկման արդյունքների մասին, որը տրամադրում են քաղաքականություն մշակող լիազոր մարմնի կողմից ընդունվող իրավական ակտով սահմանված գիտական և կրթական կազմակերպությունները՝ քաղաքականություն մշակող լիազոր մարմնի հաստատած ձևին համապատասխան:

7. Օտարերկրյա պետություններում արտադրված պեստիցիդները գրանցվում են հետևյալ ընդհանուր և պարզեցված ընթացակարգերով.

1) ընդհանուր ընթացակարգով գրանցման համար պահանջվում են՝

ա. սույն հոդվածի 6-րդ մասի 1-9-րդ կետերով սահմանված փաստաթղթերը,

բ. տեղեկություն գրանցող երկրի, գրանցման տարեթվի, համարի և գրանցող երկրի գործող անվանացանկում պեստիցիդի ընդգրկվածության վերաբերյալ.

2) պարզեցված ընթացակարգով գրանցման համար պահանջվում են՝

ա. սույն հոդվածի 6-րդ մասի 1-4-րդ և 9-րդ կետերով սահմանված փաստաթղթերը,

բ. տեղեկություն գրանցող երկրի, գրանցման տարեթվի, համարի և գրանցող երկրի գործող անվանացանկում պեստիցիդի ընդգրկվածության վերաբերյալ, բացառությամբ Կառավարության սահմանած դեպքերի:

8. Լիազոր մարմինը փաստաթղթերն ուսումնասիրելուց հետո կայացնում է տվյալ պեստիցիդը գրանցելու և Հայաստանի Հանրապետությունում օգտագործման

համար թույլատրված պեստիցիդների և ագրոքիմիկատների անվանացանկում ընդգրկելու կամ գրանցումը մերժելու մասին որոշում և թղթային կամ էլեկտրոնային տարբերակով երեք աշխատանքային օրվա ընթացքում պատշաճորեն տեղեկացնում է հայտատուին:

9. Լիազոր մարմինը պեստիցիդների գրանցումը մերժելու մասին որոշում կայացնելու դեպքում պեստիցիդների գրանցման փաթեթը վերադարձնում է հայտատուին: Գրանցումը մերժվում է, եթե՝

~~1) պեստիցիդի ազդող նյութը կամ համագործիչ կամ օժանդակ նյութերից որևէ մեկը ներառված է Հայաստանի Հանրապետությունում արգելված քիմիական նյութերի և թունաքիմիկատների ցանկում.~~

1) պեստիցիդը կամ դրա ազդող նյութը, համագործիչ կամ օժանդակ նյութերից որևէ մեկը արգելված են Հայաստանի Հանրապետությունում.

2) հայտատուն սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում չի շտկել հայտնաբերված թերությունները.

3) պեստիցիդը գրանցված չէ արտադրող երկրում, բացառությամբ Կառավարության սահմանած դեպքի հիման վրա պարզեցված ընթացակարգով գրանցված պեստիցիդի:

10. Պեստիցիդի գրանցումը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

11. Պեստիցիդները ենթակա են վերագրանցման, եթե գրանցման ժամկետը լրանալուց առնվազն 60 օր առաջ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից վերագրանցման մասին հայտ է ներկայացվել, և պեստիցիդի ազդող, համագործիչ, օժանդակ նյութերի բաղադրությունը և դրանց տոկոսային հարաբերությունը չեն փոփոխվել: Պարզեցված ընթացակարգով գրանցված պեստիցիդների դեպքում վերագրանցումն իրականացվում է սույն հոդվածով սահմանված պարզեցված ընթացակարգով գրանցման դրույթներին համապատասխան, իսկ ընդհանուր ընթացակարգով գրանցված պեստիցիդների դեպքում՝ ընդհանուր ընթացակարգով գրանցման դրույթներին համապատասխան:

12. Սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված վերագրանցումը կատարվում է այն դեպքում, երբ վերագրանցման պահին պեստիցիդը արտադրող երկրում գրանցված է, բացառությամբ Կառավարության սահմանած դեպքի հիման վրա պարզեցված ընթացակարգով գրանցված պեստիցիդի:

***(6-րդ հոդվածը խմբ. 17.12.14 ՀՕ-240-Ն, փոփ. 04.03.20 ՀՕ-125-Ն, լրաց. 15.06.23 ՀՕ-220-Ն, խմբ. 15.11.24 ՀՕ-460-Ն)***

***(15.11.24 ՀՕ-460-Ն օրենքն ունի անցումային դրույթ)***

## Հոդված 6.1. Ագրոքիմիկատների գրանցումը և վերագրանցումը

1. Հայաստանի Հանրապետությունում արտադրվող, Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և Հայաստանի Հանրապետությունում շրջանառվող ագրոքիմիկատները պարտադիր ենթակա են գրանցման, բացառությամբ սույն օրենքով սահմանված հրատապ դեպքում քաղաքականություն մշակող լիազոր մարմնի կողմից ընդունվող իրավական ակտի հիման վրա ներմուծված ագրոքիմիկատների:

2. Հայաստանի Հանրապետությունում ագրոքիմիկատները գրանցվում են ընդհանուր և պարզեցված ընթացակարգերով: Կառավարությունը սահմանում է պարզեցված ընթացակարգով ագրոքիմիկատների գրանցման իրականացման դեպքերը:

3. Ագրոքիմիկատների գրանցումն իրականացնում է լիազոր մարմինը:

4. Լիազոր մարմինը ընդհանուր ընթացակարգով ագրոքիմիկատների գրանցումն իրականացնում է հայտը ներկայացնելուց հետո՝ քսան աշխատանքային օրվա ընթացքում, իսկ պարզեցված ընթացակարգով՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում:

5. Հայտում կամ հայտին կից՝ սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված փաստաթղթերում թերությունների (վրիպակների, անճշտությունների, անհամապատասխանությունների, թվաբանական սխալների և նման այլ բացթողումների) առկայության, ինչպես նաև փաստաթղթերը թերի լինելու դեպքերում լիազոր մարմինը դրանք հայտնաբերելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, հայտատուին առաջարկում է 10 աշխատանքային օրվա ընթացքում շտկել թերությունները, իսկ սույն հոդվածի 4-րդ մասում նշված ժամկետները երկարաձգվում են 10 աշխատանքային օրով:

6. Հայաստանի Հանրապետությունում արտադրված ագրոքիմիկատների գրանցումն իրականացվում է ընդհանուր ընթացակարգով: Գրանցման համար լիազոր մարմին ներկայացվում են հետևյալ տեղեկությունները պարունակող փաստաթղթերը.

1) ագրոքիմիկատի առևտրային անվանումը, սննդատարրերը, դրանց տոկոսային հարաբերությունը կամ պարունակությունը միավոր ծավալում և թույլատրելի շեղումները, բաղադրիչ նյութերը, պատրաստուկային ձևը, արտադրողի անվանումը, հասցեն (իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական հասցեն և արտադրողի ներկայացրած արտադրական տարածքի գտնվելու երկիրը, ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, հաշվառման հասցեն և արտադրողի ներկայացրած արտադրական տարածքի գտնվելու երկիրը).

2) ագրոքիմիկատի կիրառման եղանակները, կիրառման անվտանգությանը ներկայացվող պահանջները.

3) աշխատանքային գոտում օդում ագրոքիմիկատի թույլատրելի սահմանային քանակը (տվյալների առկայության դեպքում).

4) ագրոքիմիկատի սննդատարրերի քիմիական փորձաքննության մեթոդիկան.

5) ագրոքիմիկատի թունաբանահիգիենիկ գնահատումը հավաստող փաստաթուղթը, բացառությամբ սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքի.

6) սույն օրենքի 9-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ ագրոքիմիկատի պիտակի նկարագիրը:

7. Օտարերկրյա պետություններում արտադրված, փորձարկված և գործածության մեջ գտնվող ագրոքիմիկատները գրանցվում են հետևյալ ընդհանուր և պարզեցված ընթացակարգերով.

1) ընդհանուր ընթացակարգով գրանցման համար պահանջվում են՝

ա. սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված փաստաթղթերը,

բ. տեղեկություն գրանցող երկրի, գրանցման տարեթվի, համարի և գրանցող երկրի գործող անվանացանկում ագրոքիմիկատի ընդգրկվածության վերաբերյալ.

2) պարզեցված ընթացակարգով գրանցման համար պահանջվում են՝

ա. սույն հոդվածի 6-րդ մասի 1-3-րդ և 6-րդ կետերով սահմանված փաստաթղթերը,

բ. տեղեկություն գրանցող երկրի, գրանցման տարեթվի, համարի և գրանցող երկրի գործող անվանացանկում ագրոքիմիկատի ընդգրկվածության վերաբերյալ, բացառությամբ Կառավարության սահմանած դեպքերի:

8. Լիազոր մարմինը փաստաթղթերն ուսումնասիրելուց հետո կայացնում է տվյալ ագրոքիմիկատը գրանցելու և Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված պեստիցիդների և ագրոքիմիկատների անվանացանկում ընդգրկելու կամ գրանցումը մերժելու մասին որոշում և թղթային կամ էլեկտրոնային տարբերակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետում պատշաճորեն տեղեկացնում է հայտատուին:

9. Լիազոր մարմինը ագրոքիմիկատների գրանցումը մերժելու մասին որոշում կայացնելու դեպքում ագրոքիմիկատների գրանցման փաթեթը վերադարձնում է հայտատուին: Գրանցումը մերժում է, եթե՝

~~1) ագրոքիմիկատի սննդատարրերից որևէ մեկը ներառված է Հայաստանի Հանրապետությունում արգելված քիմիական նյութերի և թունաքիմիկատների ցանկում.~~

1)ագրոքիմիկատի սննդատարրերից որևէ մեկը արգելված է Հայաստանի Հանրապետությունում.

2) հայտատուն սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում չի շտկել հայտնաբերված թերությունները:

10. Ագրոքիմիկատի գրանցումը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

11. Ագրոքիմիկատները ենթակա են վերագրանցման, եթե գրանցման ժամկետը լրանալուց առնվազն 60 օր առաջ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից վերագրանցման մասին հայտ է ներկայացվել, և ագրոքիմիկատի սննդատարրերի կազմը, դրանցից յուրաքանչյուրի տոկոսային

հարաբերությունը չեն փոփոխվել: Պարզեցված ընթացակարգով գրանցված ագրոքիմիկատների դեպքում վերագրանցումն իրականացվում է սույն հոդվածով սահմանված պարզեցված ընթացակարգով գրանցման դրույթներին համապատասխան, իսկ ընդհանուր ընթացակարգով գրանցված ագրոքիմիկատների դեպքում՝ ընդհանուր ընթացակարգով գրանցման դրույթներին համապատասխան:

12. Սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված վերագրանցումը կատարվում է այն դեպքում, երբ վերագրանցման պահին ագրոքիմիկատը արտադրող երկրում գրանցված է, բացառությամբ Կառավարության սահմանած դեպքի հիման վրա պարզեցված ընթացակարգով գրանցված ագրոքիմիկատի:

***(6.1-ին հոդվածը լրաց. 15.11.24 ՀՕ-460-Ն)***

***(15.11.24 ՀՕ-460-Ն օրենքն ունի անցումային դրույթ)***

**Հոդված 6.2. Պեստիցիդների և ագրոքիմիկատների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրումը, փորձարկումը, գրանցման ժամկետը և դրանց գրանցումից հանումը**

1. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ և 6.1-ին հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով պահանջվող փաստաթղթերը պետք է տրամադրի արտադրողը:

2. Հայաստանի Հանրապետությունում արտադրված պեստիցիդների և ագրոքիմիկատների փորձարկումն իրականացվում է դրանք պետական գրանցման ներկայացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատիրոջ միջոցների հաշվին:

3. Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդները գրանցվում են հինգ տարի ժամկետով, իսկ ագրոքիմիկատները՝ տասը տարի ժամկետով, և գրանցման ներկայացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատիրոջը տրվում է գրանցման վկայական:

4. Պեստիցիդները և ագրոքիմիկատները գրանցումից հանվում են, եթե՝

1) լրացել է գրանցման ժամկետը, սակայն թույլատրվում է դրանց իրացումը կամ օգտագործումը կամ արտահանումը մինչև պիտանիության ժամկետի ավարտը.

2) գրանցման վկայական ստացած անձը ներկայացրել է գրանցումից հանելու հայտ.

~~3) պեստիցիդի ազդող կամ համագործիչ կամ օժանդակ նյութերից կամ ագրոքիմիկատի սննդատարրերից որևէ մեկը ներառվել է Հայաստանի Հանրապետությունում արգելված քիմիական նյութերի և թունաքիմիկատների ցանկում.~~

3) պեստիցիդը կամ դրա ազդող նյութը, համագործիչ կամ օժանդակ նյութերից որևէ մեկը, ինչպես նաև ագրոքիմիկատը կամ դրա բաղադրիչ նյութերից որևէ մեկը արգելված են Հայաստանի Հանրապետությունում.»

4) գրանցման համար հիմք հանդիսացող փաստաթղթերում հայտնաբերվել են կեղծ տեղեկություններ կամ անհամապատասխանություններ օրենսդրությամբ սահմանված պահանջներին.

5) առկա են պեստիցիդի կամ ագրոքիմիկատի գրանցումը անվավեր ճանաչելու համար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով նախատեսված այլ հիմքեր:

***(6.2-րդ հոդվածը լրաց. 15.11.24 ՀՕ-460-Ն)***

***(15.11.24 ՀՕ-460-Ն օրենքն ունի անցումային դրույթ)***